ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒ

ՀՀ ԿԳՄԱՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՆԱԽԱՀՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՑԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆԱԴԵԺԴԱ ՔՈՉԱՐՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ Վարդենիկի Ռ.Հովհաննիսյանի թիվ 1 հիմնական դպրոց

Մարտունի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն---------- 3
2. Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները---------- 4
3. Եզրակացություն---------- 16
4. Գրականություն---------- 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում ներկայացված է նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու դրանց իրականացման ուղիները՝ ներկայացնելով հնարավոր մեթոդներն ու հնարները, որոնք նպաստում են երեխայի գրաճանաչության շրջանին ավելի արդյունավետ պատրաստվելուն և գրուսուցման շրջանում հանդիպած խոչնդոտներն ավելի հեշտ հաղթահարելուն:

Նախաայբբենական շրջանում ապահովվում է երեխայի ինքնակազմակերպման հմտությունները, ընդլայնվում աշխարհչանաչողական գիտելիքները: Նկարազարդված էջերը հագեցած են բազմաբնույթ առաջադրանքներով, զվարթություն են բերում երեխային: Զարգացվում են երեխայի տրամաբանական մտածողությունը, աշխարհճանաչողությունը և ինքնուրույն դատողություն անելու կարողությունը: Մեր խնդիրն է Հայաստանի Հանրապետության վեցամյա քաղաքացու մեջ դաստիարակել հայրենասիրություն, ուսումնատենչություն, ընկերասիրություն, աշխատասիրություն: Պետք է սովորի սատարել մարդկանց, գտնել ճշմարտությունը, սովորել ինքնակառավարվել, հոգ տանել բնության նկատմամբ, վերաբերմունք դրսևորի բարու և չարի նկատմամբ, կարողանա պայքարել իր բարեկեցիկ ապագայի համար: Այսօր քան երբևէ կարևոր է երեխայի մեջ սերմանել սեր համամարդկային արժեքների նկատմամբ: Նա պիտի աշխարհի մարտահրավերներին պատրաստ լինի: Պետք է դաստիարակենք հոգով և մարմնով առողջ երեխաներ:

Նպատակներին հասնելու համար ներկայացվել է ուղիներ, որոնք նախաայբբենական շրջանի ուսսուցումն ավելի մատչելի և արդյունավետ են դարձնում, հաշվի առնելով 6 տարեկան երեխայի տարիքային առանձնահատկություններն:

Ուսուցիչը պետք է լավ պատկերացնի իր անելիքը, որը գործ ունի իր անելիքը ամենևին չպատկերացնող աշակերտի հետ, որը բացարձակապես իվիճակի չէ ուսումնառության հարցերն ինքնուրույն լուծելու:

Թեմայի ընտրության նպատակը նախաայբբենական շրջանի արդիական մոտեցման ավելի արդյունավետ մեթոդների ուսումնասիրումն է և իմացածի հետ համադրումը:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Համաշխարհային գլոբալ զարգացումներն իրենց ազդեցություններն են ունենում կրթական համակարգի վրա: Պետությունը նոր պահանջներ է դնում կրթական համակարգի առջև: Հենց այստեղից էլ անհրաժեշտությունն է առաջացել կրթական համակարգում բարեփոխումներ կատարել:

Կրթական պահանջներից ելնելով մշակվել են նոր չափորոշիչներ և ծրագրեր, և դրանց համապատասխան ստեղծվել են նոր դասագրքեր:

Այսօր այդ բարեփոխումները մտել են դպրոց, երեխան դպրոց է հաճախում 5.8-6 տարեկան հասակում և տարրական դպրոցում պետք է սովորի 4 տարի: Այբբենարանը գրելիս հաշվի են առել այն հանգամանքը, որ դպրոց են մտնում 2 խմբի երեխաներ՝ նախադպրոցական հիմնարկներից և մյուս մասը՝ առանց որևէ նախապատրաստության:

Յուրաքանչյուր երեխա ծնվում է բազմաթիվ ունակությունների բնական տվյալներով, որոնք նպաստավոր պայմաններում կարող են զարգանալ և վերածվել կարողությունների, եթե մենք դրանց վրա ուշադրություն դարձնենք և զարգացման պայմաններ ստեղծենք: Քանի որ տարրական աստիճանի կարողությունները ձեռք են բերվում որոշակի գիտելիքների հիման վրա ու դրանց օգնությամբ, իսկ վարպետությունը ձեռք է բերվում ժամանակի ընթացքում՝ այդ ուղղությամբ կատարվող աշխատանքի շնորհիվ:

Նախաայբբենական շրջանի տևողությունը 42 ժամ է:

Այդ շրջանում ուսուցանվող նյութը՝

- Խոսք և պատմություն
- Նախադասություն
- Բառ և բառակապակցություն
- Վանկ

- Հնչյուն և տառ

Այս շրջանի ուսումնական նյութը բավականին ծավալուն է, և հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է, որ կարողանան հետաքրքիր և զվարթ ուսանել:

Ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ բացահայտվեն յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունները:

Նախաայբբենական շրջանն սկսվում է թեմատիկ նկարներով, նկար պատմություններով: Նկարը Այբբենարանի առանձնահատուկ բաղադրիչներից մեկն է: Դասագրքում նկարները երեք տեսակ են՝նկար-բառեր,նկար-նախադասություններ և նկար պատմություններ: Սրանցից ամեն մեկն ունի իր որոշակի տեղն ու դերը:Այդ նկարները հետապնդում են ճանաչողական,նյութի ու գաղափարի հաղորդման նպատակ: Դրանց հիմնական խնդիրն է երեխայի մեջ գեղարվեստական ճաշակի մշակումն ու գեղագիտական պահանջի իրականացումը: Նկարները հիմնականում ուսուցվելիք նյութի հաղորդման ֆունկցիա ունեն,դրանք անփոխարինելի միջոց են ուսուցողական ու դաստիարակչական նյութի առաջադրման համար,քանի որ բառերով այդ ամենը հաղորդելու հնարավորություն չկա: Ուսուցիչը պետք է նկարն այնպես պատմի, որ այն դառնա երեխայի մտածողությունն ու խոսքը հարստացնելու միջոց: Ուսուցչի խնդիրն է նկարի մեջ տրված առարկաներն ու բնության հատվածները, որքան հնարավոր է իրական ձևով ներկայացնել աշակերտներին, որպեսզի աշակերտների մեջ տարածական ըմբռնումներն ճիշտ ձևավորվեն, իրականության վերաբերյալ սխալ պատկերացում չստանան, այլ կերպ ասած «սխալը» տեսնելով, այնուամենայնիվ, ճիշտը պատկերացնեն:

Այբբենարանի մի շարք էջեր ներկայացված են մեկ թեմատիկ և մի քանի առարկայական նկարներով, որոնք բովանդակությամբ կապված են միմյանց հետ, լրացնում և ամբողջացնում են էջում ներկայացված պատմությունը: Այս առումով թեմատիկ և առարկայական նկարներն այնպիսի հարաբերության մեջ են, ըստ որի մեկը ներկայացնում է պատմությունն ընդհանուր գծերով՝ գործողությունն իր պարագայական հանգամանքներով, իսկ մյուսները՝ նրա առանձին տարրերը՝ գործողության մեջ ընդգրկված առարկաներն կամ առարկաներն ու դրանց պարզ գործողությունները: Ամբողջի այսպիսի բաժանումը կամ մասնատումը մասերի նպաստում է այդ ամբողջն ավելի լավ, ճիշտ հասկանալուն: Հնարավորություն է ստեղծում լեզվական ու տրամաբանական աշխատանքն ավելի մատչելի

դարձնելու, որովհետև բաղադրիչների օգնությամբ հեշտանում է ամբողջի ընկալումը: Սա մեծապես նպաստում է երեխաների մեջ վերլուծական կարողությունների մշակմանը, իսկ երբեմն էլ մասերի ու ամբողջի փոխհարաբերության ճիշտ ըմբռմանը, սովորեցնում է պարզ համադրություն կատարել:

Այբբենարանում ներակայացված են նախադասության և բառի ընդհանրացված պատկերները, բառի հնչյունային և վանկային կազմի գծապատկերները, գույներով տարբերակված են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոնք խոսքի զարգացման լեզվական վերլուծությունների, համադրությունների, կարդալու կարողությունների ձևավորման հիմքն է: Նախագրային բաժինը կազմակերպված է հետաքրքիր, որը սովորելու նկատմամբ ցանկություն է առաջացնում: Դասագրքում առաջադրանքները բազմաբնույթ են, աշակերտները հաճույքով են կատարում: Առաջադրանքների կատարման ընթացքում շփվում են միմյանց հետ, աշխույժ են:

Նախաայբբենական շրջանում երեխաներն աստիճանաբար ներգրավվում են ուսումնական գործընթացի մեջ: Աննկատ կերպով ավելի բարդ առաջադրանքներ կատարելուն նախապատրաստելը նրանց մտածողության զարգացումն է: Այստեղ ացահայտվում է նրանց ստեղծագործական ունակությունները, խթանվում ճանաչողական հետաքրքրությունները:

Թե՛ նախաայբբենական, և թե՛ այբբենական շրջանում հարկավոր է ուսուցումը կազմակերպել այնպես, որ երեխան հեռու մնա սերտողականից, ինչը որ հաճախ նկատվում է երեխաների մոտ, քանի որ նրանց հիշողությունը վառ է և շատ լավ են մտապահում: Սերտող երեխայի ստեղծագործական միտքն անհնար է զարգանա: Երեխաներն անսահման բերկրանք են ապրում, երբ ինքնուրույն ճիշտ դատողություններ են անում, հարցերին ճիշտ են պատասխանում:

Կրտսեր տարիքի երեխաներին շուտ են հետաքրքրում բազմաբնույթ ուսուցողական առաջադրանքները, որոնք լեզվատրամաբանական են: Այսպիսի նյութերն ավելի հեշտ են յուրացնում և ավելի են կապվում գրքին:

Այս շրջանում աշակերտները պետք է կարողանան պատմությունից առանձնացնել նախադասություն, նաղադասությունից բառ, բառերը վանկատել և ենթարկել հնչյունային վերլուծության, ճանաչել բաղաձայն և ձայնավոր հնչյունները, իմանալ ձայնավոր հնչյունի վանկարար դերի մասին:

Ակնհայտ է, որ նյութը ծավալուն է նպատակներն էլ շատ, և ուսուցչից պահանջվում է մեծ աշխատանք, որ կարողանա սահուն ձևով անցում կատարել նախաայբբենական շրջանից այբբենական շրջան:

Նախաայբբենական շրջանին տրված ժամանակահատվածում հմուտ ուսուցիչը կկարողանա կատարել այս շրջանի վերը թվարկած նպատակները:
Երեխաները լավ են հիշում այն ամենը ինչը հետաքրքիր է և պատկերավոր: Անհրաժեշտ է դասը դարձնել հնչյունների, գույների հետաքրքիր, հեքիաթային մի աշխարհ:

Այս շրջանում երեխաները համակարգում են առարկաների միջև որոշ հատկություններ, առարկաների միջև որոշ հարաբերություններ և սովորում են իրենց կենսափորձը կիրառել որոշ առաջադրանքներ կատարելիս: Նրանք կկարողանան առարկաները համեմատել ըստ որոշ հատկանիշի, խմբավորել ըստ որոշ հատկանիշի:
Սովորում են ճիշտ կառուցել խոսքը, վերարտադրել որևէ նկար, պատմության, բովանդակությունը: Հեշտությամբ գտնում են նկարում պատկերված անհեթեթությունները և բացատրում ճիշտը: Նրաք հասկանում են ինչու չի կարող ճիշտ լինել և որն է ճիշտ: Օրինակ՝ նկարում ծառն աճել է ամպից, երեխաները նախ ծիծաղում են, ապա զարմանք արտահայտում տեսածի մասին և տալիս ճիշտ պատասխան:

Նկարի բովանդակության վերարտադրումից հետո անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը հրավիրել այն հարցերի վրա, որոնք նրանց համար ճանաչողական արժեք ունեն և գիտելիքների նոր համալրում են տալու նրանց: Յուրաքանչյուր նկար, ծանոթ ու հասկանալի լինելով, այնուամենայնիվ պարունակում է նաև միանգամայն նոր տարրեր, որոնք նրա ճանաչողական կողմն են: ուսուցիչը պետք է տեսնի նորն ու առանձնահատուկը և աշխատանքի երկրորդ փուլում այն ուշադրության առարկա դարձնի, որպեսզի դրանով ապահովի դասի զարգացողական կողմը, երեխաները նոր գիտելիքներ և տեղեկություններ ստանան շրջապատի աշխարհի վերաբերյալ, ծանոթ ու հայտնի առարկաները ճանաչեն նորովի:

Նկարի վրա տարվող աշխատանքի երրորդ փուլը վերաբերում է լեզվական նյութի ուսումնասիրությանը, ճանաչմանն ու ըմբռմանը, որը կարևոր նշանակություն ունի, ինչպես լեզվական գիտելիքների հաղորդման, այնպես էլ երեխաների վերացակն մտածողության զարգացման համար: Լեզվական երևույթի

դիտումը, ճանաչումն ու բնութագրումը կատարում է ուսուցչի անմիջական հսկողությամբ, ուղեկցող առաջադրանքներով ու հուշող հարցադրումներով: Լեզվական աշխատանքն անպայման ուղեկցվում է վերլուծություններով ու համադրություններով, բանավոր ու գրաֆիկական վարժություններով, կամ սովորած հասկացությունների գծային մոդելավորումով, որը կարևոր նշանակություն ունի լեզվական վերածական հասկացությունները զննական դարձնելու և սովորածի մտապահումը կայունացնելու համար:

Լեզվական աշխատանքի համար հատկապես նյութ են տալիս թեմատիկ նկարների հետ տարված առարկայական նկարները և դրանց համապատասխանող բառերի վանկային ու հնչյունային կազմի գծային մոդելները, որոնք վերլուծության ու համադրության համար են:

Էջի վրա տարվող աշխատանքն ավարտվում է գրելու ուսուցման վարժություններով, որոնց օրինակները տրված են աշակերտների աշխատանքային տետրերում:Այս շրջանում հիմնականում տարվում են ձեռքը գրելուն նախապատրաստելու աշխատանքներ:

Յուրաքանչյուր աշխատանք կատարելուց առաջ ուսուցիչը բացատրում է, թե ինչ պետք է անեն, ինչպես պետք է այդ գործը կատարեն և ինչ հաջորդականությամբ, ապա նույնպիսի բանավոր բացատրություն կամ հիմնավորում է պահանջում նաև աշակերտներից, որպեսզի հավատացած լինի, որ նրանք պատկերացնում են իրենց անելիքը և ճիշտ կատարեն այն: Բուն աշխատանքի ընթաքում ուսուցիչը հսկում է և հետևում, որ աշակերտները ճիշտ նստեն, տետրը ճիշտ դնեն սեղանին և գրիչը ճիշտ բռնեն, աշխատանքը կատարեն առանց լարվածության, պահանջված հաջորդականությամբ ու նախատեսված դադարներով: Այս բոլոր գործողությունները սերտորեն կապված են միմյանց հետ, փոխադարձորեն լրացնում են իրար կամ հիմք են ստեղծում միմյանց համար, ուստի դրանց աստիճանականության պահպանումն անհրաժեշտություն է:

Այբբենարանի ամեն մի էջ բազմապիսի աշխատանքներ կատարելու հնարավորություն է ստեղծում, և այդ ամենը ուսուցիչը շատ լավ պետք է պատկերացնի, որպեսզի առավելագույն արդյունքի հասնի, նպաստի աշակերտների խոսքի, մտածողության ու աշխարհաճանաչողության զարգացմանը, նրանց մեջ մշակի համոզմունքներ ու բարոյական նորմեր, ձևավորի մարդ-քաղաքացիներ:

Կարելի է ընդհանուր կամ ամբողջական պատմությունից առանձնացնել նրա մասերը, որպես 'փոքրիկ պատմություններ', իսկ դրանից էլ առանձնացնել տարբեր առարկաների անունները (աղջիկ, տղա, գնդակ, օղակ, պարան, աշակերտ, ուսուցչուհի, զբոսայգի, ծառ, ծաղիկ…):

Ուշադրություն պետք է դարձնել, որ խոսքը կամ պատմությունը բաղկացած է բառերից, որ բառի շնորհիվ և միջոցով է, որ ստեղծվել է այդ պատմությունը: Աշակերտները կարող են ասել բազմաթիվ այլ բառեր, կարելի է դրանք որոշ այլ կապակցության մեջ դնել (ծաղիկ-գեղեցիկ ծաղիկ, հոտավետ ծաղիկ, պարան-երկար պարան, կարճ պարան, բարակ պարան, ամուր պարան):

Դասագրքի 4-րդ էջում երկրորդ դասն է՝ մի թեմատիկ նկար Հայաստանի բնությունից՝ ձյունագագաթ լեռներ, որոնց կատարներին լողում են ամպերը, կանաչ անտառներ, որտեղ թափառում են գեղեցիկ եղնիկները, աղմկում են լեռնային գետակները և, անկասկած, կա նաև մարդը, որ այդ ամենի տերն է, պահողն ու պահպանողը:

Մեծադիր թեմատիկ նկարի ներքևում փոքրիկ նկարներ են՝ լեռներ, գետակ, ծառ, փաղչող եղնիկ՝ իր ձագի հետ, մի տղա և մի գեղեցիկ թռչուն, որոնցից յուրաքանչյուրի շուրջ կարելի է հյուսել գեղեցիկ պատմություն՝ նախադասություն: Այդ նախադասությունից կարելի է անջատել առանձին բառեր (սար, ծառ, եղնիկ, տղա, թռչուն…): Հատկապես պետք է ուշադրություն դարձնել խոսքի միավորների այդ աստիճանական փոքրացման ու դրանց միջև եղած կապերին ու անցնումներին՝ մեկից բխում է մյուսը, մեկը մյուսի բաղադրամասն է: Դրանք տարբերվում են ոչ միայն իրենց նկարների ծավալով, այլև խոսքի ծավալով կամ բառային արտահայտությամբ: Կարելի է կազմել մի քանի գեղեցիկ բառակապակցություններ (ձյունապատ լեռներ, բարձր լեռներ, գեղեցիկ լեռներ, աղմկոտ գետակ, փաղչող եղնիկ, գեղեցիկ եղնիկ, խելացի տղա, աշխատասեր տղա, կարգապահ տղա…):

Նախ պետք է սովորեցնել մանրամասն 'կարդալ' թեմատիկ նկարը՝ նրա մեջ տեսնել շատ մանրամասնություններ, որոնք գուցե և նկարում չկան, սակայն այսօրվա քաղաքային կյանքի համար բնորոշ ու բնութագրական են և դրանց վրա պետք է ուշադրություն դարձնել: Կարելի է խոսել մշակութային օջախների՝ կինոների, թատրոնների, թանգարանների, պատկերասրահների, մշակութային պալատների և այլ օբյեկտների, գործարանների ու մեծ կառույցների մասին:

Լեզվական աշխատանքի նյութ կարող է լինել նորից ամբողջական պատմությունը, բառը և բառի կապակցման կամ խոսքի մեջ օգտագործելու հնարավորությունը: Այս հարցում օգտակար կարող են լինել առարկայական նկարները որպես վերլուծական, համեմատության ու հակադրության նյութ:

Տրանսպորտի տարբեր ձևեր կարող են շատ լավ տրամաբանական վարժության նյութ լինել: Ընդհանրացման, մասնավորման, խմբավորման կամ դասդասման այդ աշխատանքները ինչպես մտածողության զարգացման, այնպես էլ հատկապես ճանաչողության ու գիտելիքի հարստացման տեսակետից կարևոր նշանակություն ունեն և այդ աշխատանքները չպետք է աչքաթող անել:

Խոսքի զարգացման աշխատանքի ընթացքում պետք է ձգտել նկարը բազմակողմանիորեն ու բոլոր մանրամասներով 'կարդալ', նրանում որքան կարելի է շատ բան տեսնել, շատ բան ասել գյուղական կյանքի մասին: Գյուղական կյանքի լավատեղյակությունը ճանաչողության սահմանների ընդարձակման ու խոսքի զարգացման համարկար կարևոր նշանակություն ունի:

Լեզվական աշխատանքի նյութը վերստին ամբողջական պատմությունը և բառը պետք է լինեն: Այստեղ մի շարք բառեր կան վերլուծության համար (հավ, աքաղաղ, սագ, բադ, կով, հորթ, ոչխար, գառ, ձի, մտրուկ, խոզ, խոճկոր…), որոնց շուրջ կարելի է բազմակողմանի աշխատանք կատարել:

Այդ նույն առարկայական նկարների շուրջը կարելի է նաև տրամաբանական աշխատանք կատարել թռչունների ու կենդանիների խմբավորման կամ դասդասման, մեծերի ու փոքրերի խմբավորման ու առանձնացման, մասնավորման ու ընդհանրացման ուղղությամբ: Այս աշխատանքները և խոսքի զարգացման՝ առանձնապես բառապաշարի հարստացման և տրամաբանական մտածողության տեսակետից շատ օգտակար են:

Ամբողջական պատմությունից շատ գաղափար պետք է տալ նաև նախադասության մասին, որպես պատմության և բառի միջև ընկած միջանկյալ աճանցման օղակ, որպես բառերի կապակցում, որը միտք է արտահայտում և այլն: Նկար-նախադասությունը վերցրած է թեմատիկ նկարից և անմիջապես հասկանալի է երեխաներին թե իր բովանդակությամբ, թե ձևով:: Այն տրված է ոչ միայն նկարով, այլև ընդհանրացված գծային մոդելով, որը հետագայում դառնալու է բանավոր ասված բոլոր համանման նախադասությունների 'գրի առնելու' կամ գրանցելու միջոցը:

Լեզվական աշխատանքի ժամանակ ուշադրություն պետք է դարձնել նաև նկար-բառերի վրա, որոնք տրված են գրենական պիտույքների ձևով (պայուսակ, գրչատուփ, գրիչ, մատիտ, քանոն, գիրք, տետր):

Նկարի բովանդակությունը վերարտադրելուց հետո աշխատանք կարելի է կազմակերպել նկար-նախադասության և նկար-բառերի շուրջ՝ դրանք վերլուծելու, դրանց գծային մոդելնեները կազմելու, դանք խոսքի մեջ օգտագործելու, կամ այլ բառերի հետ կապակցության մեջ դնելու առումով: Այստեղ առաջին անգամ գաղափար է տրվում նախադասության բառային կազմի գծային մոդելը կազմելու մասին, իսկ դրանից եզրակացություն է արվում, որ յուրաքանչյուր բառ առանձին վերցրած կարող է ունենալ իր գծային մոդելը և կազմվում են առաջադրված նկար-բառերի գծային մոդելները: Նախադասություններին բռային կազմի և առանձին բառերի գծային մոդելները կազմելու վերաբերյալ անհրաժեշտ ամրապնդման վարժություններ պետք է կատարել:

Խոսքի զարգացման աշխատանքն ավարտելուց հետո, այս ամենը պետք է լեզվական ու տրամաբանական վարժությունների նյութ դարձնել: Այս աշխատանքները երկուստեք օգտակար են երեխաների համար և պետք է հանգամանորեն կանգ առնել մրգերի բնութագրման համեմատության ու հակադրման, դասդասման ու խմբավորման վրա, յուրաքանչյուր աշխատանք յուրովի ուսուցման , նոր գիելիքների ու տեղեկությունների աղբյուր դարձնել:

Բառերի վանկային կառուցվածքի գծային մոդելների ներքևից տարված վանկային կորերը ցույց են տալիս դրանց ընթերցման կամ կարդալու եղանակը՝ ամբողջական բառով կամ վանկերով և ամբողջական բառով: Սրանք հարցեր են, որրոնք չպետք է վրիպեն ուսուցչի ուշադրությունից , որովհետև այդտեղ ամեն գիծ ու պատկեր իր որոշակի արժեքն ու նշանակությունն ունի և պետք է այդ նշանակությունը ճիշտ գիտակցել ու օգտագործել, որպեսզի ուսուցումն իր ցանկալի արդյունքը տա:

Լեզվական աշխատանքն ավարտելուց հետո երեխաների ուշադրությունը պետք է նպատակաուղղել առարկայական նկարների տրամաբանական կողմի վրա՝ ընդհանրացման ու մասնավորման աշխատանքեր կատարելու համար:

Ուսուցման այս փուլում մայրենի և մաթեմատիկա առարկաների միջև կապը խիստ կարևոր է, միմյանց օգնող և երեխաներին հնարավորություն է տրվում նյութը ճիշտ յուրացնել: Երկուսն էլ նախապատրաստվում են լուրջ ուսումնական

գործընթացի՝ մայրենիի դեպքում տառեր և գործողություններ, մաթեմատիկայի դեպքում՝ թվեր և գործողություններ նրանց հետ:

Հետաքրքրականն այն է, որ երեխան հնարավորություն է ընձեռնում նույն երևույթին տարբեր տեսանկյունից նայել և հաճախ կրկնել անցած նյութը, ամրապնդել ձեռք բերած գիտելիքները և համակարգել որևէ նյութի վերաբերյալ: Նախաայբբենական շրջանում երեխաները ծանոթանում են կենդանական աշխարհի ներկայացուցիչների, ծաղիկների, գրենական պիտույքների հետ: Նրանք կատարում են զանազան համեմատություններ, գտնում են առարկաների նմանությունները և տարբերությունները: Կատարում են խմբավորումներ: Այս ընթացքում սովորում են երկարատև և լարված աշխատելուն, որովհետև նյութն իրենից հետաքրքրություն է ներկայացնում երեխայի համար: Գտնում են միմյանց ընկեր առարկաները, հակառակորդները, ավելորդը: Այս աշխատանքները հետաքրքրությամբ են կատարում և հիմնականում կատարելով առաջադրանքները՝ տալիս են ճիշտ պատասխաններ:

Աշխատանքը բավիղներում զարգացնում է երեխաների ուշադրությունը, ճիշտ կատարելու կարողությունը: Սիրով նկարում են առարկաների պակասող մասերը: Այս աշխատանքների շնորհիվ զարգանում է երեխաների դաստակի և մատների նրբաշարժումները:

Նախաայբբենական շրջանում երեխաները վարժվում են պատմությունից առանձնացնել նախադասություն, նախադասությունից՝ բառ, բառերը կարողանում են վանկատել, ենթարկել հնչյունային վերլուծության: Երեխաները կարողանում են գծել նախադասության, բառի գծգապատկերները և հասկանում են, թե ինչ է գծապատկերը, վանկային կորը: Չանաչում են ձայնավոր և բաղաձայն հնչյունները և կարողանում են գունավորելով տարբերել այն, հասկանում են ձայնավորի վանկային դերը և յուրացնում, կարողանում են տրված նկարի տակ գծել բառի գծապատկերը և գունավորել հնչյունները:

Մեր խնդիրն է զարգացնել երեխայի խոսք կառուցելու հմտությունը, մտքերը շարադրելու կարողությունը:

Նախաայբբենական շրջանի նպատակներից է զարգացնել երեխաների դիտողականությունը և տեսողական հիշողությունը, զարգացնելով պատկերավոր մտածողությունը, խոսք կառուցելու կարողությունը: Այս պարագայում երեխան հասկանում է, որ պատմությունն ունի վերնագիր և վերնագրի փոխարեն պայմանականորեն դնում է գունավոր թղթից կտրված ծաղիկ: Պատմության

բովանդակությունը վերարտադրելու համար նախապես ծնողների կողմից պատրաստված գունավոր շերտիկներով փորձում են ներկայացնել պատմության բովանդակությունը՝ տարբերելով երկար և կարճ նախադասությունները: Հասկանում են պատմության սկիզբը, ընթացքը և ավարտը: Մեր նպատակն է, որ երեխան կարողանա պատմությունից անջատել գլխավոր և երկրորդական մտքերը և հասնել նրան, որ երեխաները կարողանան ստեղծել նկարագրական փոքրիկ պատմություններ, որ խոսքի մեջ օգտագործեն հատկանիշ արտահայտող բառեր: Իսկ այս ամենի համար անհրաժեշտ է զարգացնել երեխայի պատկերավոր մտածողությունը:

«Այբբենարանի» 26-րդ էջում ներկայացված է «ընտանիք» թեման: Այս նկար պատմությունով սկսվում է պատմության, նախադասության և բառի մասին նախնական պատեկերացումների ձևավորումը և համակարգումը:

Նկար – պատմություն – նախադասություն – բառ շղթան հնարավորություն է տալիս հող նախապատրաստել նախադասության ու բառի գծապատկերների ուսուցման համար:

Ուսուցիչ – Հեքիաթ լսել սիրու՞մ եք: Իսկ խաղալ սիրու՞մ եք երեխաներ: Շա՛տ լավ: Եկե՛ք խաղանք: Կարո՞ղ եք գուշակել, թե ի՞նչ ենք խաղալու և ինչո՞վ ենք խաղալու:

Երեխաները տալիս են տարբեր պատասխաններ:

Ուսուցիչ – Երեխանե՛ր, խաղալու ենք ձեր դասագրքով և շերտիկներով, որոնք ձեր համար պատրաստել են ձեր ծնողները: Ես գիտեմ, որ դուք շատ եք սիրում հեքիաթներ լսել: Ապա փորձեք ինքներդ կարդալ: Չե՞ք կարող կարդալ, հոգ չէ: Ես ձեզ կոգնեմ, որ կարդալ ու գրել սովորեք: Ուզու՞մ եք: Դե, եկե՛ք սկսենք:

Նայումենկարինև«կարդում»,

թեովինչէանում:Վերջումընդհանրացնումեմևխնդրում, որ շերտիկներով նշեն յուրաքանչյուր միտքը:

Հայրիկը թերթ է կարդում: Մայրիկը խոսում է հեռախոսով: Տատիկը կար է անում: Արմենը տեղավորում է ջութակը: Փոքրիկ Անուշը փորձում է կարդալ: Տիգրանը պայուսակն է դասավորում:

Երեխաները երկար նախադասությունների փոխարեն դնում են երկար շերտիկներ, կարճերինը՝ կարճ: Մենք ստացանք մի պատմություն, որը կազմված է 6

նախադասությունից: Այնուհետև սկսում ենք «կարդալ» նախադասությունը: Օինակ՝

- Տա՛թև, կարդա առաջին նախադասությունը:
- Արմե՛ն, կարդա վերջին նախադասությունը:

Նմանատիպ աշխատանք ենք կատարում նաև մյուս էջերի առաջադրանքների համար, և երեխաներն աստիճանաբար կարողանում են «կարդալ» և «գրել» պատմություններ:

Հաջորդ քայլում գրում ենք «Արան ծիծաղեց» նախադասությունը, այս դեպքում երեխաներին օգնության են գալիս գրպանիկների կարճ շերտիկները, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մի բառ: Երեխան արտասանում է նախադասությունը, առանձնացնում է առաջին բառը և մեկ շերտիկ դնում, երկրորդ անգամ է արտասնում նախադասությունը , երկրորդ բառն է առանձնացնում և մյուս շերտիկը դնում է առաջինի կողքին: Շերտիկները տարբեր գույն ունեն, որովհետև դրանք տարբեր բառեր են: Սկզբում երեխաները շերտիկները դնում են իրար կպած, բացատրում եմ, որ բառերը արտասանելու ժամանակ մենք փոքր դադարներ ենք տալիս և այդ դադարները ցույց տալու համար պետք է շերտիկներն առանձնացնենք իրարից: Երեխաներին հարցնում եմ, թե արդյոք ավարտեցի՞նք մեր միտքը, նրանցից ստանալով այո պատասխանը ասում եմ, որ պայմանավորվենք միտքն ավարտելու դեպքում նշենք երկու փոքրիկ շրջանակներով: Մենք գիտենք, որ մեր շրջապատի յուրաքնաչյուր առարկա և երևույթ իր անունն ունի: Եկեք գծապատկերին անուն դնենք: Նրան կանվանենք <u>նախադասություն</u>: Իսկ նախադասության ավարտը խորհրդանշող երկու շրջանիկներին կանվանենք <u>վերջակետ</u>: Այս կերպ երեխաները սովորում են, որ նախադասության մեջ բառերը գրվում են իրարից հեռու, և նախադասության վերջում դրվում է վերջակետ:

Հաջորդ քայլում պահանջում եմ, որ պետք է գրենք բառեր, այդ բառերը կախելով ծառից: Յուրաքանչյուրը մի բառ է կախում ծառից և փորձում ենք հաշվել հիշողությամբ «գրելով» այդ բառերը ծառից կախված կարճ շերտիկների օգնությամբ: Յուրաքանչյուրը վերցնում է իր շերտիկն ու ասում բառը:

Վանկի ուսուցումը և ամրապնդումը ներկայացված է դասագրքի էջ 30-ում: Փորձում եմ ուսուցանել այսպես. շշուկով բառ եմ արտասանում և պահանջում, որ ինձ վերադարձնեն այդ բառը – մուուուուուկ, նաաաաավ, ծաաաաղիիիիկ այնուհետև գալիս ենք այն եզրակացության, որ նշված բառերն արտասանվում են

միանգամից, մի շնչով, մի քանի շնչով: Ցուցադրում եմ գծապատկերները, որոնց տակ երեխաները գծում են վանկային կորեր, որոնք խորհրդանշում են շնչելը: Երեխաները սովորում են, որ միավանկ բառերն արտասանելիս մեկ ծափ են տալիս, երկվանկ բառերը՝ երկու, և այլն:

Բառի վանկերի թիվը հաշվելու համար սովորում են հետևյալ հնարը, բառն արտասանելիս ձեռքը պահում են ծնոտի տակ և ծնոտը քանի անգամ դիպչում է ձեռքին, բառի մեջ այնքան վանկ կա:

Դասագրքի 34-րդ էջում սկսվում է բառի հնչյունային վերլուծության գծապատկերային ներկայացումը: Այս անգամ մեզ օգնության է գալիս «կախարդական» արկղիկը, որի մեջ «լցված» են հնչյուններ: Պահանջում եմ երեխաներից, որ գուշակեն, թե ինչ կա արկղիկի մեջ , ասելով, որ ցույց տալ չեմ կարող, որ նրանք չարաճճի են և անհամբեր սպասում են, թե երբ եմ բացելու արկղի բերանը, որ դուրս թռչեն և փախչեն: Երեխաներից պահանջում եմ ձեռքերը բացել, պարզեն առաջ և ուշադիր լինեն, որ բռնեն նրանց: Զգուշությամբ բացում եմ արկղիկը, կիսաձայն արտասանում եմ «մ» հնչյունը, և ձեռքով նետում երեխաներին: Նրանք օդում «որսում» են հնչյունը և փակում ձեռքերը, այնուհետև ուղարկում եմ «ա», «ս», «ու», «ր» հնչյունները, գալիս ենք այն եզրակացության, որ բառերն էլ են լինում երկար ու կարճ, որը կախված է այն բանից, թե նրա մեջ որքան ձայն կա: Այդ ձայների անունը դնում ենք հնչյուն:

Էջ 36-ից սկսում է բառի կառուցվածքային վերլուծությունը, ձայնավոր և բաղաձայն հնչյունների հետ ծանոթությունը:

Այս անգամ մեզ հյուր են գալիս երկու իրար նման տիկնիկներ:

Երեխանե՛ր, հյուրեր ունենք: Եկե՛ք գտնենք նրանց տարբերությունները: Երեխաները գտնում են, որ մեկի հագուստը կարմիր է, իսկ մյուսինը՝ կապույտ: Փորձենք ծանոթանալ նրանց հետ: Վատ է, որ նրանք անուն չունեն: Եկեք նրանց անուններ տանք: Կարմիր զգեստով տիկնիկին անվանում ենք Ձայնավորիկ, իսկ կապույտ զգեստով տիկնիկին Բաղաձայնիկ:

Ուսուցիչ – Ձայնավորիկը շատ գեղեցիկ ձայն ունի և շատ է սիրում երգել, իսկ խեղճ Բաղաձայնիկը չի կարողանում երգել: Ինչու՞: Որովհետև ձայն չունի: Ձեր գրպանիկներում կարմիր և կապույտ քառակուսիներ կան, կարմիրները կտանք Ձայնավորիկին, իսկ կապույտները՝ Բաղաձայնիկին:

Այս քառակուսիների օգնությամբ բառերի հնչյունային վերլուծություն ենք ստանում և ստանում բառի հնչյունային կազմը:

Բառը ձգված արտասանում եմ, երեխաները առանձնացնում են հնչյունները և դնում համապատասխան քառակուսիները: Մեծ մանկավարժ Ծ.Ա.Ամոնաշվիլին այս մեթոդն անվանել է կեղծագիր: Աստիճանաբար կեղծագիրը վերածվում է գրի, տառերը փոխարինում են քառակուսիների: Երեխաները սովորում են բառեր գրել, առանց բոլոր տառերն իմանալու տիրապետում են բառերի գրառման ընդհանուր եղանակի:

Այս ամենը կատարվում է երեխաների համար հոգեհարազատ միջավայրում, որն ստեղծում է դասագիրքը իր գունագեղությամբ, առաջադրանքների հետաքրքրաշարժությամբ, նյութի մատուցման խաղային հնարներով: Երեխան իրեն լավ է զգում, որ իրեն միշտ «տեսնում է» ուսուցիչը: Յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն ունի լուծելու ցանկացած առաջադրանք, կարդալու ցանկացած բնագիր՝ ինքնուրույն, ընկերների օգնությամբ և որոշ ժամանակ անց վերադառնում է դրան ստեղծագործաբար «կրկնելով» անցածը:

Եզրակացություն

Այսպիսով, ճիշտ կատարելով ուսուցման նպատակներն ու խնդիրները ապահովվել է ուսուցման մատչելիության սկզբունքները: Ուսումնական նյութը երեխային հասանելի է դարձվել : Մեծացվել է նրա ոգևորությունը ուսուցման պրոցեսում ակտիվություն է ձեռք բերել: Երեխան ծանոթացել է ուսումնական գործընթացի կազմակերպման: Կարողացել է կատարել անհատական, խմբային և զույգերով աշխատանք: Ուսուցումը կազմակերպել է այնպես, որ հասանելի լինի բոլորին: Երեխան հասկացել է իր դպրոց հաճախելու նպատակը, հաղթահարել բոլոր դժվարությունները: Կարողացել է վերարտադրել ուսուցանված նյուը, տարբերակել է, համադրել, հակադրել: Ուսուցիչը հասել է այն բանին, որ երեխան գիտակցել է տվյալ նյութը սովորելու անհրաժեշտությունը: Նախաայբբենական շրջանն ավարտելուց հետո երեխաներն ունեն կայուն գիտելիքներ

խոսք-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն

հնչյուն-վանկ-բառ-նախադասություն-խոսք

վերլուծական համադրական շղթայի մասին և առանց դժվարությունների կարողանում են սահուն անցում կատարել նախաայբբենական շրջանից այբբենական շրջան:

Գրականություն

1. Կրթության պետական չափորոշիչ
2. «Մայրենի լեզու» ծրագիր (առաջին դասարան)
3. Վ.Սարգսյա - «Այբբենարան»
4. Վ.Սարգսյան – «Այբբենարան» (ուսուցչի ձեռնարկ)
5. «Նախաշավիղ» ամսագրեր
6. Ա.Տեր-Գրիգորյան «Կարդալու և գրելու կարողությունների զարգացումը»
7. Ծ.Ա.Ամունաշվիլի-«Բարև՛, երեխաներ»

Դասի պլան

Առարկա – Մայրենի

Դասի թեմա – Առարկաների հատկություններ (ծանր, թեթև)

Դասի նպատակը – Զարգացնել երեխաների բանավոր խոսքը

Վերջնարդյունք – Ծանր ու թեթև հասկացությունների տարբերակում

- Նկարի բովանդակության ներկայացում՝ պատմության տեսքով:

Դասի ընթացքը – Դասը կսկսենք պատմելով թե ինչ են տեսնում առաջին նկարում:

(Ո՛վ) Կպատասխանեն հարցերին «Ո՞վ կարող է պատմել: Ի՞նչ են անում մայր արջը և ձագուկները: Ի՞նչի վրա է դրված նոճանակ-տախտակը: Ո՞վ է ծանր ո՞վ՝ թեթև»: Լսեմ երեխաների պատասխանները և կգանք այն եզրակացությանը որ մայր արջը ծանր է իր երկու ձագուկներից, որ երկու ձագուկը միասին թեթև են մայր արջից: Նույն հարցերը կհյեցնեմ նաև հաջորդ նկարի համար: Նմանատիպ հարցերը օգնում են, որ երեխաները հասկանան, որ միշտ չէ, որ շատը ծանր է: Դա նրանց պետք կգա նաև մաթեմատիկայում:

Երկուսն էլ փոքրիկ պատմություններ են, ամեն մեկը իր շրջանակի մեջ: Այդ նպատակով կբացատրեմ, որ պատմությունը կարելի է գրել նույնիսկ առանց տառերը ճանաչելու այսինքն՝ գծել: Կգծեմ մի ուղղանկյուն և կանվանենք նրան պատմության տնակ:

Ֆիզկուլտ դադար՝ «Բերքահավաք»

Այնուհետև երեխաներն ըստ ուրվագծերի կնկարեն, ապա կներկեն պատկերները: Երեխաները շատ են սիրում անհեթեթ նկարներով պատմությունները: Այս էջում նրանք առաջին անգամ կհանդիպեն նման նկարի: Երեխաները կնկարագրեն սխալներով և կհիմնավորեն, թե ինչու է սխալ, այսինքն կասեն, թե որն է ճիշտը: Գրատետրի համապատասխան էջի առաջադրանքների կատարում:

Դասի պլան

Առարկա – Մայրենի

Դասի թեմա – Առանձնացրու խմբերի

Դասի նպատակը – զարգացնել երեխաների տրամաբանական մտածողությունը

- Առարկաներին հատկանիշներ վերագրելու կարողությունը

Վերջնարդյունք – զարգացած տրամաբանական մտածողականություն

- Առարկայի հատկանիշ վերագրելու կարողություն

Դասի ընթացքը – Խթանման փուլ – Զրույցի միջոցով նախ երեխաներին կհարցնեմ, թե նրանք ինչ են տեսնում վերևի ձախ նկարում: Նրանք մաթեմատիկայից կիմանան, որ դրանք շրջաններ, եռանկյուններ և քառակուսիներ են: Այնուհետև կասեն թե յուրաքանչյուր պատկերից քանի հատ կա՝ 4 շրջան, 4 եռանկյուն, 4 քառակուսի: Կառաջարկեմ երեխաներին մտածել, թե ինչպես պատկերները կարելի է բաժանել երեք խմբի: Կպատասխանեն 4 եռանկյունը՝ մի խմբում, 4 շրջանը՝ մի խմբում, 4 քառակուսին մի խմբում: Նույն բնույթի աշխատանք կկատարվի նաև գունային առումով: Ուրեմն կբաժանվի երեք խմբի՝ յուրաքանչյուր խմբում նույն գույնի պատկերներով: Եվս մեկ հատկանիշ կավելացնենք՝ մեծ պատկերներ, փոքր պատկերներ: Նույն բնույթի աշխատանք կկատարվի աջ կողմի նկարի հետ: Առաջին խմբավորումը կլինի ծաղիկների գլխիկներով գույները՝ կարմիր, դեղին: Երկրորդ հատկանիշները կփորձեն գտնել երեխաները: Կհուշեմ, որ ծաղիկների մի

մասը աջ է «նայում» մի մասը՝ ձախ: Եվ հենց այդ հատկանիշով էլ կառանձնացնենք երկու խմբի: Հաջորդ առաջադրանքը կատարելու համար երեխաները կթվեն թե ինչ առարկաներ են տեսնում նկարում: Կխոսեն նաև յուրաքանչյուր առարկայից գործածությունից: Գործիքները կառանձնացնեն մարդկանց տեղաշարժվելու համար օգտագործվող առաջարկերից: Նույնը նաև վերջին նկարի հետ:

Գրատետրի համապատասխան առաջադրանքի կատարում և 19-րդ էջի առաջադրանքների կատարում: